ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԳԻՐՄԱՆ 140-ԱՄՅԱԿԸ

Սկիզբը՝ էջ 3
Մենք վատահ ենք, որ ողջ լավագույն կօգտագործեք ձեզ ընդհանրապես ինչպես հնարավորությունը, որպեսզի ամբարեց գիտելիքներ, ամբարեց իմաստություն եւ փորձառություն: Անցե՛րեք եւ զորացրեք ձեր մեջ հավատքի արարումն ու զգացումը: Հավատքն է գործերին կենդանություն եւ հավերժություն պարգևողը: Մենք պիտի ուզենք, որ ձեր գործերը լինեն կենդանի գործեր՝ դեպի հավիտենություն միտված, որպեսզի մեր Եկեղեցու ընթացքը եւ մեր ժողովուրդի կյանքը միշտ լինեն հավերժության

լույսով առաջնորդված»:
Նորին Սրբությունը մասնավոր իր գնահատանքը հայտնեց նաեւ Մայր Աթոռի բարերարներին, ում հանձնառությունների շնորհիվ գործնական ու պայծառանում է Հայ Եկեղեցին, իր առաքելությունն է շարունակում նաեւ Գեորգյան հոգեւոր ճեմարանը: Խոսքի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն արդարեւ հայցեց, որ ողորմած Տերն Իր Մուրը Աջի հովանիին տարածյալ պահի հայոց ազգի, Մայր Աթոռի եւ նրա հոգեւոր-կրթական հաստատությունների վրա, զորացնի իրենց կոչման

ու առաքելության մեջ:
Հանդիպման ընթացքում ընթացվեց նաեւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու ռուսմական կոմիտեի նախագահ, Մոսկվայի հոգեւոր ավագանիի ղեկավար Եվգենի Գրեչկովի շնորհավորական խոսքը: Ծննդարարի կարեւոր դերին անդրադարձան Գեորգյան հոգեւոր ճեմարանի նախկին տեսուչ Եվգենի Գրեչկովը եւ ԳԳԾ դասախոս, պ. գ. թ. Պետրոս Հովհաննիսյանը: Զաղվածքներ կատարվեցին նշանավոր ճեմարանակների հուշերից:
Երեկոյան դասական, ժողովրդական եւ հոգեւոր ստեղծա-



գործունեության կատարումներով հանդես եկան «Հովիտ» պետական կամերային երգչախումբը:

Կոմիտասի անվան պետական քառյակը, Գեորգյան հոգեւոր ճեմարանի սաներն ու երգչախումբը:

Գերմանիայի Միջեկեղեցական խորհրդի յայտարարութիւնը Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի առիթով

Հոկտեմբերի 1-ին եւ 2-ին Գերմանիայի Մագդեբուրգ քաղաքում տեղի ունեցաւ Գերմանիայի Միջեկեղեցական խորհրդի անդամաժողովը: Ժողովին Գերմանիայի Հայոց Առաջնորդութիւնը ներկայացնում էին Սերովբէ վարդապետ Իսախանեանը եւ դոկտոր Խաչիկ Ղազարեանը: Անդամաժողովն այլ հարցերի կողքին ընդունեց ներքոյիշեալ պաշտօնական յայտարարութիւնը՝ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի առիթով:

«2015 թուականին մենք ոգեկոչում ենք Օսմանեան կայսրութեան կողմից իրագործուած Հայոց ցեղասպանութեան 100-ամեակը: Մէկ եւ կէս միլիոն հայեր սպանուեցին 1915-1922 թուականների միջեւ, իսկ բազմաթիւ քաղաքներ էլ ներկայիս թուրքիայում գտնուող իրենց բնօրրանից տեղահանուեցին եւ արտոյնեցին: Այսօր ողջ աշխարհով ցրուած աւելի քան վեց միլիոնանոց «հայկական սփիւռքը» տեսանելի հետեւանքն է այս ցեղասպանութեան: Անցած մէկ հարիւրամեակ անց կատարուածն իր ծանր ազդեցութիւնն է թողել ոչ միայն հայ ժողովրդի, այլ նաեւ միջազգային հանրութեան վրայ: Եղիշիկ եղբայրներ, այդպէս ցրուած հայեր, տառապանքի եւ անարդարութեան ճանաչումը շարունակում է հրատապ մնալ:

Մենք յարգում ենք յիշատակը հայ, ինչպէս նաեւ շուրջ վեց հարիւր հազար արամեական, քաղղեական, ասորական եւ յունական ծագմամբ քրիստոնեաների՝ ներառեալ կաթոլիկներին ու բողոքականներին, ովքեր սպանուեցին իրենց հայ եղբայրների եւ քոյրերի հետ միասին: Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ցանկերը՝ «Հայ Եկեղեցուն հնարարութիւնն ընձեռել իր ձայնը բարձրացնելու եւ պայքարելու 20-րդ դարի առաջին Ցեղասպանութեան ճանաչման համար», տարիների ընթացքում արժեւորուել է Հայ Եկեղեցու կողմից:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին Գերմանիայի Միջեկեղեցական խորհրդի անդամ է: Եւրոպայի համար շատ կարեւոր է Հայոց ցեղասպանութեան 100-ամեակը: 2005 թուականին Գերմանական խորհրդարանը մատնանշել է այս առնչութեամբ Գերմանիայի պատմական ու բարոյական պատասխանատուութիւնը: Որպէս Գերմանիայում գործող Եկեղեցիներ՝ մենք միասնականօրէն կրում ենք այս պատասխանատուութիւնը եւ անհրաժեշտ նկատում աւելնալով վերոյիշեցնել այս մասին:

Հետեւաբար Միջեկեղեցական խորհրդի անդամաժողովը, որը տեղի ունեցաւ 1 եւ 2 հոկտեմբեր 2014 թուականին Մագդեբուրգում, իր անդամ Եկեղեցիներին եւ հասկանքներին քաջալերում է՝ արթօնով եւ արարողութիւններով ոգեկոչել այս յուշատօնը: Անդամաժողովը նաեւ վերոյիշեցնում է Միջեկեղեցական խորհրդի վարդապետ 2012 թուականի առաջարկի մասին՝ տեղերում շինուներ հաստատել Ցեղասպանութեան առնչուած Եկեղեցիների (Հայ Առաքելական, Ասորի Ռուդափառ, Յոյն Ռուդափառ) հետ եւ կազմակերպել միասնական միջոցառումներ: Տեղական եկեղեցիներում արթօնի հրաւեր կարող է տեղի ունենալ գանգերի ղողարկմամբ: Որպէս միասնական ժամանակակէտ՝ առաջարկում է 24 ապրիլ 2015 թուականի երեկոյեան ժամը 5-ը:

Մագդեբուրգ, 2 հոկտեմբեր 2014

Հայկական գրադարանների երրորդ միջազգային համաժողովը

2014 թ. հոկտեմբերի 6-7-ը ՀՀ մշակույթի նախարարության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Հայաստանի ազգային գրադարանի աջակցութեամբ տեղի ունեցող «Անցյալի պահպանութիւն» հանուն ապագայի» խորագրով Հայկական գրադարանների երրորդ միջազգային համաժողովը, որը շարունակութիւնն է 2009 թ. օգոստոս ամսին Ն. Ս. Ս. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնութեամբ Մայր Աթոռ Սր Էջմիածնի եւ ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի «Գրիգոր եւ Կարա Չոհրապ» տեղեկատվության կենտրոնի կազմակերպած Հայկական գրադարանների առաջին համագումարի եւ «Երեւանը գրքի համաշխարհային մայրաքաղաք» եւ «Հայ գրատուրայի 500-ամյակի» հանդիսարարութեան շրջանակում 2012 թ. ՀՀ մշակույթի նախարարության, Մայր Աթոռ Սր Էջմիածնի եւ Հայաստանի ազգային գրադարանի աջակցութեամբ կազմակերպած Հայկական գրադարանների երկրորդ միջազգային համաժողովը:

Համաժողովի ընթացքում եղան քննարկումներ երեք հիմնական թեմատիկ ուղղութիւններով:

- Գրգափոխանակութեան կազմակերպում հայագիտական հաստատությունների միջեւ,

- Ցեղասպանութեան 100-ամյա տարելիցին ընդառաջ,

- Հայկական տպագիր ժառանգութեան էլեկտրոնային շտեմարանների ստեղծում:

ա. Հայ հնատիպ գրքի համահավաք շտեմարանի ստեղծում:
բ. Հայ պարբերականի մամուլի համահավաք շտեմարանի ստեղծում:

Համաժողովին անդրադարձ կատարվեց նաեւ հայկական գրադարաններում եւ հայագիտական կենտրոններում հայ հնատիպ գրքերի առկայությանը, եղանակի հավաքածուների թվայինացման ուղղութեամբ կատարված եւ կատարվելիք աշխատանքներին, հա-

վաքածուների էլեկտրոնային մատենագիտական նկարագրման ուղղութեամբ տարվող աշխատանքներին, հայագիտական հավաքածուների տեսանելիութեամբ համացանցում, հազվագյուտ հավաքածուների պահպանման ու վերականգնման հարցերին:

Համաժողովը հոկտեմբերի 6-ին անցկացվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում:



Ասորագրվեց փոխընթերցման հուշագիր Մայր Աթոռի մատենադարանի եւ Հայաստանի ազգային գրադարանի միջեւ

Համաժողովի ընթացքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի տնօրէն Արարատ Զին. Պողոսյանը եւ Հայաստանի ազգային գրադարանի տնօրէն Տիգրան Զարգարյանը ստորագրեցին փոխընթերցման հուշագիր: Հուշագրով նախանշվող համագործակցութեան շրջանակներում երկու կառույցներն իրենց նպաստն են բերելու հայագիտութեան պահպանման, զարգացման ու տարածման, երիտա-

սարդ սերնդի դաստիարակութեան եւ ազգային-հոգեւոր արժեքների մասին իրազեկման կարեւոր գործին, խթանելու եւ հայագիտական կենտրոնների հետ հարաբերությունների ամրապնդումն ու խորացումը, իրականացնելու եւ հայ տպագիր ժառանգութեան եւ փաստաթղթերի թվայինացման, թվային գրադարանի ստեղծման, թվայինացման միջոցով վտանգված կոլեկցիի երկարաժամկետ պահի-

պանութեան ծրագրեր: Հուշագրով նախատեսվում է նաեւ գրադարանական փոխընթերցման համար վարպետաց դասերի կազմակերպումը Հայաստանի ազգային գրադարանում, մասնագետների փոխալցել, համատեղ ցուցադրություններ եւ համաժողովներ:

Համագործակցութեան շրջանակներում Մայր Աթոռի մատենադարանը կներգրավի հայ պարբերականի մամուլի համահավաք գրացուցակի եւ հայ հնատիպ ու վաղ շրջանի գրքերի համահավաք շտեմարանների ձեւավորման աշխատանքներում:

Նախանշված աշխատանքների իրականացման նպատակով կստեղծվի Ս. Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի եւ Հայաստանի ազգային գրադարանի ներկայացուցիչներից կազմված հանձնախումբ:

Էջմիածնի քույր քաղաքների ներկայացուցիչների այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին

Հոկտեմբերի 8-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Մայր Աթոռի դիվանապետ Արշակ Եսայ Խաչատրյանն ընդունեց Էջմիածնի քաղաքի տոհմ առիթով Հայաստան ժամանած Էջմիածնի քույր քաղաքներ Պետրոգրադովսկի (Ռուսաստանի Հանրապետություն), Ֆրեդրիխ (ԱՄՆ) եւ Իսիլ-Լե-Մուլիսի (Ֆրանսիա) ներկայացուցիչներին՝ ուղեկցությամբ Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանի: Ողջունելով հյուրերի այցը Հայաստան եւ Լրանք մասնակցությունը քա-

ղաքի 2699-ամյակի առիթով կազմակերպված տոնակատարություններին՝ Արշակ սրբազան Էջմիածնի քույր քաղաքների ներկայացուցիչներին փոխանցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Մայրապետի Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու բարեմաղթանքները:

Մայր Աթոռի դիվանապետն ուրախութեամբ հաստատեց, որ Էջմիածնի տոհմ արդեն իսկ բարի ավանդույթ է դարձել, եւ այդ առիթով շնորհավորեց

ներկաներին՝ կարեւորելով քույր քաղաքների միջեւ սերտացող կապերն ու գործակցությունը տարբեր ոլորտներում: Սրբազան հայրն անդրադարձավ նաեւ քաղաքային իշխանությունների եւ Մայր Աթոռի միջեւ առկա շեղմ փոխհարաբերություններին:

Հանդիպումը խոսվեց նաեւ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի առիթով քույր քաղաքների կողմից ծրագրվող համատեղ միջոցառումներին մասին:

Տրասարակվել է

Մայր Աթոռ Սր Էջմիածնում (2014 թ.)



Բ. Ի. ԿԱՐԵՅԻ
КАТОЛИКОС ВСЕХ АРМЯН
ОВАНЕС VIII КАРБЕЦИ
1831-1842


Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Մայրապետի Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սր Էջմիածնի հրատարակչական բաժինը ռուսերենով լույս է ընծայել **Վաչերի Թուկյանի «Ամենայն Հայոց Կաթողիկոս Ռոմիանես Ը Կարբեցի»** աշխատությունը:

Մենագրությունը ընթերցողին հնարավորություն է ընձեռում լավագույն ծանոթանալու 1826-1856 թթ. Հայ Եկեղեցու ու ժողովրդի կյանքում տեղի ունեցած իրադարձություններին, ինչպէս նաեւ համակողմանի ուսումնասիրելու Ռոմիանես Ը Կարբեցի Կաթողիկոսի գործունեությունը՝ մասնավորապէս Ռուսական կայսրության հետ ունեցած փոխհարաբերությունները:

Գրքում օգտագործվել են Ռուսական կայսրության կառավարական գերատեսչությունների արխիվների, ավանական Ֆոնդերի դեմէս անտիպ կոլեկցիաներ, Ռոմիանես Ը Կաթողիկոսի թղթակցությունը, ժամանակակիցների հուշեր, տվյալ ժամանակաշրջանի մամուլի հրապարակումներ:

Հաջորդ գիրքը Մայր Աթոռ Սր Էջմիածնի միաբան **Սահակ վրդ. Ծաքարյանի «Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի հայոց թեմը»** մենագրությունն է:

Գրքում հեղինակն արխիվային փաստաթղթերի, պարբերական մամուլի եւ պատմագիտական գրականության համակողմանի քննությամբ ներկայացնում է Բեսարաբիայի տարածքում հայկական գաղթավայրերի առաջացման, Եկեղեցիների կառուցման եւ տարբեր եկեղեցական-ծխական հաստատությունների ստեղծման ու գործունեության հարյուրամյա պատմությունը, որն ընդգրկում է 1812-1920 թթ. ժամանակահատվածը: Աշխատության մեջ մասնավորապէս անդրադարձ է կատարվում Բեսարաբիայի թեմակալ առաջնորդների եւ հայ նշանավոր գործիչների գործունեությանը: Հեղինակը քննության է առել նաեւ թեմի տարածքում գտնվող Էջմիածնապատկան կալվածքների ընդհանուր դրությունը, քանակը եւ շահագործման հետ կապված խնդիրները:



ՏՈՐ ՆԱՄԱՐԵԳՈՒՆԻ
ԵՎ
ԲԵՏԱՐԱԲԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԵ

Գրքերը հրատարակվել են մեկնեալությամբ «Մարգիս Գաբրիելյան» հիմնադրամի:

Լրատվական կոլեկցիա՝ ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՐԵԿԱՅԱՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Սկզբը՝ թիվ 17

Հայ ազգագրության և բանահյուսության ուսումնասիրումն սկսվեց Մխիթարյաններից, սակայն դրանց հետազոտությունն առանձնապես զարգացավ 1870-ական թվականներին, երբ Գարեգին Սրվանձյանը Հայաստանի տարբեր վայրերից գլի առավ և հրատարակեց ազգագրական-բանահյուսական բազմաթիվ կուրթեր՝ «Գրոց-բրոց», «Յնոց-նոց», «Մանանա», «Համով-հոտով» և այլն: Հետագայում այս ուղղությամբ նշանակալի աշխատանք կատարեց Մկրտիչ Կրիմյանը (1892-ի մայիսից Ամենայն Հայոց Կաթողիկոս): Վերջինիս նախաձեռնությամբ 1855-ի հունիսից մինչև 1856-ի հունիսը Կ. Պոլսում հրատարակվեց «Արծուի Կասպուրական» ամսագիրը: Մկրտիչ Կրիմյանը 1857 թ. Կարապավանքում հիմնադրեց ինգետոր ծառանգավորաց վարժարան, իսկ 1858-ին վերսկսեց «Արծուի Կասպուրական» հրատարակությունը: 1862 թ. Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը Մկրտիչ Կրիմյանին հանձնեց Տարոնի հոգեւոր առաջնորդի պաշտոնը և Ս. Կարապետ վանքի վանահայրությունը: Նա Տարոնում հիմնադրեց նոր հոգեւոր ծառանգավորաց վարժարան և հրատարակեց «Արծուի Տարոն» (1863-65 թթ.) երկշաբաթաթերթը՝ Գարեգին Սրվանձյանի խմբագրությամբ: Սակայն ազգավեր գործունեության համար թուրքական կառավարությունը նրան համարեց բաղադրականապես «անբարեհույս» հոգեւորական, փակեց դպրոցն ու տպարանը (**Մարաշի աղբ. Ոսթրանեան**, Ազգապատում, Մ. Էջմիածին, 2001, հ. Գ, էջ 578):

Մկրտիչ Ա Վանեցի շատ բարձր էր գնահատում «Մխիթարեան գրավաստակ հայրերի» ծառայությունը հայ մշակույթի ուսումնասիրության, եվրոպայում հայագիտության զարգացման գործին: Մխիթարյանների նման նախաձեռնակորի գիտության և մշակույթի առաջընթացին՝ նա բոլորակերպ այրումով ծառայեց հայ դպրությանը, երիտասարդ սերնդի կրթու-

թյանն ու դաստիարակությանը: Եռանդուն հոգեւորական, հայրենասեր է իմաստուն գրող Մկրտիչ Կրիմյանի գործունեության շնորհիվ ուսման նկատմամբ սեր տարածվեց:

Մկրտիչ Ա Վանեցի Հայրապետի գործեակներին ու գաղափարները հող նախապատրաստեցին հասարակական-գրական այն շարժման համար, որ 1890-ական թթ. հայտնի դարձավ «զատառական գրականություն» անունով և ավելի ուշ ձեւավորվեց իբրեւ գրական հոսանք: Ծարձումը հիմնավորում էր այն իրողությունը, որ ազգային մշակույթի ու գրականության կենսատու է հուսալի հենարանը Մայր երկիրն է, հայրենի հողը, ուր վաղնջական ժամանակներից ապրել է ժողովուրդը՝ իր կենցաղով, խառնվածքով, ստեղծել նյութական ու հոգեւոր արժեքներ, ուր ձեւավորվել են ազգային ոգին ու բնավորությունը: Գրականությունը պետք է արտացոլի ժողովրդի հոգեւոր, կենցաղը, երազները ու ապրումները:

Կրիմյան Հայրիկը գրել է բազմաթիվ աշխատություններ, որոնց մեջ առանձնակի տեղ են գրավում հոգեւոր-աստվածաբանական բնույթի ստեղծագործությունները. դրանցից են 1851 թ. լույս տեսած «Հրախորհ երկրի անտեսաց» չափածո պոեմը, «Մարգարիտ արքայութեան երկնից» (1866), «Վերջին շաբաթ. հաշի ճառ» (1876) աշխատությունները: Կրոնաբարոյախոսական թեմաներով են գրված նաեւ «Դրախորհ ընտանիք» (1876), «Սիրաց եւ Սամուել» (1878), «Պապիկ եւ թոռնիկ» (1894) աշխատությունները (**Կրիմյան Հայրիկ**, Երկեր, Երեւան, 1992):

Պատմագիտության մեջ անգնահատելի է Մաղաքիա արք. Օրմանյանի ավանդը. նրա «Ազգապատում» աշխատությունը (3 հատոր, 1912-1927 թթ.) այսօր են պահպանում և իր գիտական արժեքն ու սկզբնաղբյուրային նշանակությունը: Առանձնակի կարեւորություն ունեն եվրոպայում կրթություն ստացած Կարապետ Տեր-Մկրտչյանի, Գալուստ Տեր-Մկրտչյանի,

Նի, Գարեգին Հովսեփյանի, Երվանդ Տեր-Միսնայանի աշխատությունները:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Ա Հովսեփյանը թողել է գրական, գիտական հսկայածավալ ժառանգություն (**Ս. Սիմոնյան**, Գարեգին Կաթողիկոսի բանասիրական վաստակը, «Էջմիածին», 1952, է. էջ 34): Նրա աշխատությունները նվիրված են հայագիտության գրեթե բոլոր բնագավառներին՝ պատմությանը, բանասիրությանը, բանահյուսությանը, հայ գրչությանն ու մանրանկարչությանը, արվեստին, հնագիտությանը, ձեռագրագիտությանը, դրանցից շատերը կոթողային արժեք են ներկայացնում: Գարեգին Ա Հովսեփյանը 1892 թ. հրատարակեց իր առաջին գիտական գործերը՝ «Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից» և «Սասնա ծռեղ» էպոսի չորս պատումը: Ժողովրդական բանահյուսությունը և ազգագրությունը համարելով հայոց պատմության կարեւոր աղբյուր՝ նա հավաքեց են գլի առավ ազգագրական բազմաթիվ այլ նմուշներ: 1917-ին կազմեց ազգագրական կուրսի ժողովածու: Նշանակալի են նրա մատենագիտական բնույթի հրապարակումները՝ «Մխիթար Սասնեցի», «Խոսրոբիկ թարգմանի», «Թովմա Մեծոփեցու կենսաբան», «Մխիթար Արիվանեցի» և այլն:

Հայագիտության մեջ մեծ ներդրում է Գարեգին Ա Հովսեփյանի «Խաղաղասեպե կամ Պոռնոպան Հայոց պատմության մեջ» եռահատոր աշխատությունը (1928-43 թթ., երկրորդ հրտ.՝ 1969): Հեղինակն իր այս կարևոր ուսումնասիրությամբ լրացրեց հայոց պատմության մեջ բաց մնացած է գրեթե չուսումնասիրված մի շրջանի՝ ԺԳ-ԺԵ դդ. պատմությունը, փաստեց, որ Բագրատունյաց թագավորության անկումից հետո Հայաստանն ունեցել է կազմակերպված գործել իշխանություններ, զարգացած տնտեսական կյանք, մշակույթ և գիտություն («Զրիտոսոյա Հայաստան», հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 197):



Գարեգին Ա Հովսեփյանը հայագետ Ն. Մառի հետ մասնակցեց հնագիտական պեղումներին, նշանակալի դերակատարում ունեցավ պատմագիտական եւ ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրման բնագավառում: Մանրանկարչությունը վերաբերող իր աշխատություններում անդրադարձավ գրչության արվեստին, հայ մանրանկարչության ակունքներին, վաղեմությանն ու ինքնատիպությանը, ոճերի, ուղղությունների ու դպրոցների առանձնահատկություններին (**Մ. Դազարյան**, Հայ արվեստի երախտավոր Գարեգին արք. Հովսեփյան, «Էջմիածին», 1979, էջ):

Հայ հոգեւորականներն արժանաւիր շատակ դերակատարում ունեցան նաեւ երաժշտագիտության բնագավառում: Հայ երաժշտության գոհարներն օտար տարրերից զուլեց, պահպանվեց եւ մեզ հասավ Կոմիտաս վարդապետի (Սողոմոն Սողոմոնյան) շնորհիվ: Նա իր երաժշտական վաստակով կանգնեց աշխարհահռչակ մեծ երաժիշտների լուսն փառանգում (**Լյուսի Յաթայուլ**, Կոմիտաս, Երեւան, 1956, էջ 402): Կոմիտասյան երգով հայ մշակույթն արժանի կերպով ներկայացավ աշխարհին ու մարդկությանը:

Շարունակությունը՝ էջ 8

ԶԼԱՅԻԼ ԼՈՒԻՍ

Սկզբը՝ թիվ 3-6, 8-18

Բրիտանացի հանրաժայտ գրող Զլայլ Լուիսի վերոհիշյալ գործը քրիստոնեական թեմաներով երգիծական մի ստեղծագործություն է, որ ներկայացնում է հառնակի կոչվող դեռի նամակները նրա գարնիկ Օշինդրին: «Հառնակի նամակները» ստեղծագործությունը՝ որպես առանձին գիրք, առաջին անգամ հրատարակվել է 1942 թվականին:

20

Իմ սիրելի Օշինդրիկ,

Մեծ տհաճությամբ եմ արձանագրում, որ Թշնամին, ներկա պահի դրությամբ, բռնությամբ վերջ է դրել քո գործերին, ուրոնք ուղղված էին խնամարկյալի ժուժկություն դեմ: Դու պետք է որ իմանալի, որ Նա միշտ էլ գործում է վերջում, և պետք է նախքան այդ փուլին հասնելը դադար տալի: Դրովիհետե ինչպես երեսում է ներկա հանգամանքներից, քո այդ մարդը հայտնաբերել է վտանգավոր ճշմարտություն այն մասին, որ այս հարձակումները հավիտյան չեն տեսում: Հետեւաբար, դու այնպես չես կարող գործածել այն, ինչ, ի վերջո, մեր լավագույն գեներ՝ Թ՝ տգետ մարդկանց այն համոզմունքը, թե մեզնից ազատվելու հույս չկա, կարելի է միայն հանձնել: Ենթադրում եմ՝ դու փորձել՝ ես ինամարկյալի համոզել, որ ժուժկությունն առողջությանը վնաս է:

Ես թեզնից գեկույց չտեսա խնամարկյալի շրջագծերի կանանց մասին: Պիտի նորից հիշեցնել, որ եթե մենք չենք կարողանում նրա սեռական վարքը գործածել նրան անժուժկալ դարձնելու համար, ապա պետք է փորձենք դա գործածել մեզ համար ցանկալի ամուսնության նպատա-

ԽԱՌՆԱԿՉԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Նվիրված է **Տ. Թովկեմին** (ամբողջացի գրող, բանաստեղծ, բանասեր)



կով: Մինչ այդ, ես ցանկանում եմ քեզ հուշել կնոջ տեսակը, ի նկատի ունեմ ֆիզիկական տիպը, որին էլ պետք է նա փրահարվի, եթե «սիրաբարկեմ» և լավագույն, որ մենք կարող ենք գուրի բերել:

Իհարկումս սա այն հարցն է, որը մեզ համար արագորեն վճռում են Ստոխսպետության շատ ավելի ցածրում գտնվող հոգիները, քան ես ու դու ենք: Այդ մեծ վարպետների գործն է ամեն տարիքի մարդկանց մեջ առաջացնել այսպես ասած սեռական «ճաշակի» ընդհանուր խանգարում: Սա նրանք անում են հան-

րահայտ արդիստների, հազուադ ընդհանրի, դերասանուհիների և գովազդների տարածողների միջոցով, ովքեր էլ հենց որոշում են նորածնությունը: Նպատակն այն է, որ լուրջաբանյուր սեռի հեռացնեն հակառակ սեռի այն ներկայացուցիչներից, ում հետ հոգեւոր առումով օգտակար, երբեք էլ չեն պոզիտիվ մոտույթ: Ես մեծ հավանականություն կա: Այդպես մենք արդեն շատ դարձել են, ինչ հաղթում ենք բնությանը, այն աստիճան, որ տղամարդու որոշ երկրորդական հատկանիշներ (նկչաչա օրինակ՝ մորուքը) անընդունելի ենք դարձրել համարյա բոլոր կանանց համար, եւ դա նշանակում է շատ ավելին, քան դու կարող էիր ենթադրել: Ինչ վերաբերում է տղամարդկանց ճաշակին, մենք այն բավականին փոփոխել ենք: Մի ժամանակ մենք այն ուղղորդում էինք դեպի գեղեցկության վեղ ու ազնվական տեսակը՝ խառնելով տղամարդկանց սնամիտությունը նրանց ցանկություններին՝ հետ է թաքցնելով մարդկային ցեղի բազմաթիվ գլխավորապես ամենազուգուր ու անառակ կանանց միջոցով: Մի ուրիշ ժամանակ մենք ընտրեցինք չափազանց կանացի տեսակին՝ տկար ու նվաղ, որպեսզի արժեւորվեն անխեղությունն ու վախկոտությունը եւ դրանց զուգակցվող մտավոր ամրոցը կեղծիքն ու փոքրությունը: Իսկ այժմ մենք հակառակ գիծն ենք առաջ տանում: Ձագի դարաշրջանը հետ է մղել վաղի դարաշրջանին, եւ մենք այժմ սովորեցնում ենք տղամարդկանց սիրել այն կանանց, որոնք մարմինը հազիվ է տարբերվում տղայի մարմնից: Զանի որ սա գեղեցկության մի տեսակ է,

որոնք մենք ավելի վաղանցուն է, մենք այսպիսի տղամարդկանց կանանց ծերանալու քրոնիկ տալեկալ (բազմաթիվ գեղազան արդյունքներով) եւ նրանց մեջ ավելի ու ավելի պակասեցնում երեխաներ ունենալու ցանկությունն ու կարողությունը: Եվ սա ամբողջը չէ: Մենք խիստ մեծացրել ենք այն արդունությունը, որ հասարակությունը տալիս է արվեստում բացահայտ մեղկության ներկայացմանը (ոչ իսկական մեղկությանը) եւ դրա ցուցադրությանը բեմում կամ լողափին: Իհարկե այդ ամենը կերծ է. հանրային արվեստում ցուցադրվող մարմինները կերծ են. լողագետներն ու գուգագուկաներով կանանց իրականում արհեստականորեն ձգում ամրացնում են, որ ավելի ձիգ, ավելի նիհար ու տղայատիպ դառնան, քան բնությունը կարող է թույլ տալ լիովին կազմավորված կնոջը: Սակայն միևնույն ժամանակ՝ ներկայիս աշխարհին սովորեցնում են հավատալ, թե իբր այն ավելի «անկերծ» ու «առողջ» է դառնում և վերադառնում բնությանը: Արդյունքում մենք ավելի ու ավելի ենք ուղղորդում տղամարդկանց ցանկությունը դեպի այն, ինչն իրականում գոյություն չունի՝ սեռական կյանքի դերն ավելի ու ավելի կարեւոր եւ միաժամանակ դրա պահանջներն արժանի ու ավելի անհնարին դարձնելով: Թե այն ինչ է հետեւում, դու կարող ես հեշտությամբ կանխատեսել: Դա է այս պահի ընդհանուր ռազմավարությունը: Բայց այդ շրջանակի ներսում դու դեռ ունես հնարավորություն՝ ինամարկյալի ցանկությունները մեկ կամ երկու ուղղությամբ առաջ տանելու:

Շարունակությունը՝ էջ 8

ՆԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՆԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ էջ 7
Կոմիտաս վարդապետն իր կյանքի 20 տարին անցկացրեց Սուրբ Էջմիածնում. իր հոգու բոլոր թելերով եւ ստեղծագործական ներշնչումով կապված էր Սայր Աթոռի պատմությանը, խորհուրդին, վանական մթնոլորտին: Նարեկյան արդյունքների ներքո նա գտավ հայ երգարվեստի ինքնատիպ ակունքը եւ դարձավ մեր ազգային երաժշտության սերմնացանը: Այդ տարիների մասին առանձնահատուկ ջերմությամբ եւ քննչալիքով էր հիշում: «Երբ Գեորգ Դ Կաթողիկոսն ինչ-նում էր Վեհարանից Սայր Տաճար, եւ եւ իմ մի ծայնելը ընկերս կանգնում էինք Նորա Աթոռի մոտ եւ այնպես երգում միայնակները: Մեր երգելու ժամանակ ծերունի Չալոյանները արցունքները գլորում էին եւ թափալուրով երկար ու ճերմակ մորուսի վրայով՝ թաքնվում էին փիղիկ ծալքերի մեջ» («Կոմիտաս վարդապետի ինքնակենսագրությունը», «Էջմիածին», 1969, ԺԲ, էջ 7):

Անգնահատելի է Կոմիտաս վարդապետի հավաքական ու գիտական աշխատանքը. նա ժողովրդական երգերը գրանցեց ազգագրագետի վարդապետությամբ, գեղագետի պահանջվողությամբ եւ գիտականի վերլուծական դիտողականությամբ: Դրանք բազմաժանր են, բացահայտում են հայ ազգային ոճը եւ լեզուն, արտահայտչամիջոցների բազմազանությունն ու ինքնատիպությունը: Այս մասին հենց ինքը նկատում է. «Ժողովուրդն է մեկնամեծ ստեղծագործող, գնացե՛ք եւ տվե՛րեցե՛ք նրանից» («Խոհեր Կոմիտաս վարդապետից», «Էջմիածին», 1969, ԺԲ, էջ 19):

Կոմիտասը հայտնաբերեց ժողովրդական բանահյուսության հնագույն բարձրարվեստ նմուշներ՝ հորովվելների եղանակները, «Սասունցի Դավիթ» եւ «Սոկալ Սիդիկ» հնագույն վիպերգերը, միջնադարյան աստուծոյները, հոգեւոր տաղերը: Նրա հավաքած ավելի քան չորս հազար գեղեցական երգերը բնորոշում են հայ ժողովրդի հոգեկենտրոնացած, նրա բնավորական ու նկարագիրը, արտահայտում ապրումները, հոգեւոր ու դժբախտությունները:

Չալոյ վարդապետն իր աշխատություններում բացահայտեց ժողովրդական երաժշտության կենսական հիմքերը, բնութագրեց հայ երգի գեղագիտական արժանիքները, վերլուծեց տեսակներն ու հատկանիշները: Խոսնարկելով մագաղաթյա ձեռագրերի երաժշտական հրաշալիքների վրա՝ երկար տարիներ

աշխատեց՝ հայտնաբերելու հայ խազագրության մեծ գաղտնիքները եւ, որպես մեր երգարվեստի Մեհրուպ, հայ հոգին գտավ եկեղեցական ու ժողովրդական երգերում:

Սուրբ Էջմիածինը կարծես Արեւելյան եւ Արեւմտյան Չալաստանների մի մասնիկն էր, մանրակերտը, եւ հայոց հոգին գալիս, ավազանվում էր Սայր տաճարում: Ահա այդտեղ Կոմիտաս վարդապետը լսում էր հայ երգարվեստի մասունքները՝ որպես սրբություն, ոգի, ապրում ու խոռոչ, հուզում ու տեսիլք, եւ նրա միտքը պայծառանում էր, ուղղվում հայոց երկնքից իջնող լույսով, խորհուրդով:

Երաժշտությանը նվիրված ուսումնասիրություններում Կոմիտասն անդրադարձավ հոգեւոր երգարվեստի կազմավորմանն ու պատմական զարգացման պարբերացմանը, ժանրերին, հայ եկեղեցական ձայնեղանակների տեսությանը, խազաբանությանն հարցերին: Նա փորձեց սկզբունքորեն բացահայտել ժողովրդական եւ հոգեւոր երաժշտության հիմքերի միասնությունը: Նա գտավ հայ երգը, հայի հոգուն բնորոշ տիպականը, երգարվեստի արմատներն ու այն պնդեց հարազատորեն, մաքրագրորեն ավելորդ, օտար տարրերից, բյուրեղացրեց իր ստեղծագործական բուրյակի մեջ: «Ես պիտի հասնվե՛մ իմ բուն նպատակին. մեր հայ ժողովրդական երաժշտությանն զանազան դուրս պիտի բերեմ հայրենի աւերակներէ...» («Խոհեր Կոմիտաս վարդապետից», «Էջմիածին», 1969, ԺԲ, էջ 19):

Կոմիտաս վարդապետը հայտնաբերեց իր մեր երաժշտական մշակույթի պատմության մեջ, միանշանկ ամբողջություն՝ հոգեւորական, երաժշտագետ, գիտնական ու հայրենասեր:

Չալոյանության զարգացմանը մեծապես նպաստեցին նաեւ հայ եւ օտարալեզու բազմաթիվ հանդեսներ, պարբերականներ, ժողովածուներ ու թերթեր:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո հասարակական գիտությունների ուսումնասիրությունը խիստ քաղաքականացվեց: Բազմաթիվ աշխատություններ հրատարակվեցին, որոնք գովերգում էին սոցիալական տակնի հասարակարգը, քարոզում կոմունիստական կուսակցության գաղափարախոսությունը, «իմամավորում» արեւելքը (ա-



նաստվածությունը): Գրաքննության, հակաեկեղեցական քաղաքականության, անաստվածության եւ գաղափարական պարտադրանքի պայմաններում անհնար դարձավ հայագիտությանը եւ նրա զարգացումը: Պատմական շատ փաստեր եւ իրադարձություններ ներկայացվում էին խեղաթյուրված եւ առանց ճշմարիտ մեկնաբանության: Ստավրականների, գորղոների, գիտնականների գործունեությունը վերահսկվում էր: Գեղեհիկ սոցիոլոգիզմը, պարտադրվող աթեիստական գաղափարախոսությունը խոչընդոտեցին միջնադարյան պատմության, գրականության, մշակույթի կարեւոր հիմնահարցերի ճշմարիտ լուսաբանումը:

Չալոյանականության հաստատումով եկեղեցին թեւակոխեց պատմության մի սուր շրջափուլ՝ անհամեմատ ծանր պայմաններով եւ բարդ հիմնահարցերով, սակայն դարձավ մնաց իր նվիրված եւ քննաքննի հավասարակշռվող իր բազմաազդար ազգի դառնություններն ու դժբախտությունները: Խորհրդային տարիներին Չալոյանայացի եկեղեցի իրավասությունները խիստ սահմանափակվեցին, գույքն ու կալվածքները բռնագրավվեցին, իսկ հոգեւորականները ենթարկվեցին բռնաճնշումների: Կրոնի մերժման գաղափարախոսության պարտադրանքով անցյալի ժառանգությունից գրեթե օտարվեցին հոգեւոր մատենագրությունը, ազգային եկեղեցու պատմությունը եւ դավանաբանությանը վերաբերող աշխատասիրությունները, Սուրբ Էջմիածնի գիտ-

նական-հոգեւորականներից շատերը հալածվեցին կամ հարկադրյալ դադարեցրին հետազոտական աշխատանքները: Բնությունների եւ խոշտանգումների սպառնալիքով արգելվում էր անդրադառնալ Չալ եկեղեցու դավանաբանությանը, ծիսակարգին, տոներին, հոգեւոր մատենագրությանը, եկեղեցական վիճագրությանը, մանրակարգությանը: ճնշվում էր այդ ուղղության կատարված յուրաքանչյուր փորձ: Բացարձակապես անհնար էր սոցիալ-դասակարգային գաղափարախոսությունը պարտադրաբար տարածվեց մշակույթի ողջ ժառանգության վրա, որն ունեցավ ծանր հետեւանքներ. անգամ այս պայմաններում հայագիտությունն առաջնության պարթեւեց թուր քնազավանդում գիտական ինքնատի նվաճումներ գրանցեց:

Խորհրդային Միության փլուզումից (1991 թ.) հետո հայաքաղաքական զարգացման համար առավել նպաստավոր պայմաններ են ստեղծվել: Վերացել են գաղափարախոսական արգելքները, տեղական եւ արտերկրի հայագիտական կենտրոնների միջեւ սերտ համագործակցություն ծավալելու հնարավորություն եւ ընձեռել: Ուրվագծվել են սուր հեռանկարներ, որոնք իրենց հերթին կարանոր եւ բարդ հիմնախնդիրներ են առաջադրում հայագիտությանը, անհրաժեշտ է հաղթահարել ու վերադառնալ նախորդ շրջանների թերությունները, փոփոխել որոշ ստեղծումներ, վերանայել եւ այլ դիտանկյունից լուսաբանել հայոց պատմության որոշ շրջափուլեր, հիմնահարցեր, առանձնակի ուշադրություն դարձնել Սփյուռքի հետ հարաբերությունների ամրապնդմանն ու գիտական համագործակցության սերտացմանը: Անհրաժեշտ է հրատարակել եւ վերահրատարակել հայագիտական կարեւորություն ու գիտական կշիռ ունեցող գործեր:

Այսօր սերտացել են եկեղեցի-պետություն հարաբերությունները, որոնք նպաստում են հոգեւոր մշակույթի, մատենագրության, վիճագրության, մանրակարգության ուսումնասիրմանն ու նորովի արժեւորմանը: Անհրաժեշտ է ուշադրության արժանացնել եւ լուսաբանել Չալ եկեղեցու պատմությանը, նրա անցած ընթացքին, դավանանքին, ծիսակարգին, ծավալած գործունեությանը, տարբեր շրջափուլերում եկեղե-

ցի-պետություն հարաբերությունների վերաբերող խնդիրները: Այս ուղղությամբ առաջնության է «Վալերադեր Չալ եկեղեցու պատմության» մատենաշարի (1994-2008 թթ.) լույս է տեսել 16 հատորով՝ հրատարակվել: Նշանակալի է Չալ եկեղեցու պատմության դասագրքերի տպագրությունը:

Որոշ տեղաշարժ եւ նկատվում եկեղեցական կանոնագիտության եւ տոմարագիտության բնագավառներում:

Չալոյանականության գաղափարական կապանքներից հետո հավատացյալները կրկին վերադառնում են Սայր եկեղեցու գիղկը, ապավինում նրան, վերագտնում Տիրոջն ու Նրա միջթաղանջությունը, լույսն ու խաղաղությունը: Իսկ Չալ եկեղեցին՝ հավատարիմ իր երդմանն ու սկզբունքներին, շարունակում է ազգանկեր, աղոթատեր ընթացքը: Սայր Աթոռ Սուրբ Էջմիածին իր գործունեությամբ շարունակում է խթանել հայագիտության զարգացումը, նպաստել հայ մտավոր ներուժի բացահայտմանը: Դաստարակվում են սրբախոսություններ, եկեղեցական հայրերի մեծաթեքերը, թարգմանական ծանրակշիռ գործեր, Չալ եկեղեցու դավանաբանությանը, պատմությանը, ծիսակարգին վերաբերող աշխատությունները: Սայր Աթոռի պաշտոնական՝ «Էջմիածին» ամսագրում տպագրվում են միջնադարյան արժեքավոր անտիպ բնագրեր, մեկնություններ, մատենագիտական նյութեր, եկեղեցական վիճագրություններ, որմնակարգությանը, մանրակարգությանը վերաբերող հոդվածներ: Ամսագրում հրատարակվում են նաեւ կրոնագիտական, պատմաբանասիրական, գրականագիտական, հայագիտական արժեքավոր հոդվածներ, գրախոսություններ, իսկ ավանդական դարձած բաժնիներն ավելացվել են նաեւ: Երկրաշարժ Չալոյանությանը՝ «Երկրաշարժ Չալոյանության» երկնաքարը հանրամատչելի շարադրանքով ներկայացնում է մեր օրերում Չալ Աթոռի վրա եկեղեցուն առաջադրված մարտահրավերները, պատմախանութ հավատացյալների հուզող շատ հարցեր, ընդգրկում եկեղեցական տոներին, ծեսերին ու խորհուրդների վերաբերող նյութեր: Եւրոյ գիտակրթական գործունեություն եւ ծավալում Գեորգյան հոգեւոր ճեմարանը, Իսկ Երիտասնակյան դաստիարակության կենտրոնը, Զարգացական բաժինը կարելու է պատմախանութում առաքելություն են իրականացնում:

Սրբիկն ՉԱՆԹԿԱՆ

ԽԱՐԱԿԱԶԻ ՆԱՄԱԿՆԵՐ

Սկիզբը՝ էջ 7
Եթե դու ուշադիր նայես որեւէ տղամարդու սրտի մեջ, դու կգտնես, որ նրան առնվազն երկու երեսնակայական կին է հետապնդում՝ մեկը՝ երկրային, մյուսը՝ դժոխային Վենուսը, եւ որ նրա ցանկությունը, կախված նրանից, թե որ մեկին է ուղղված, որակապես տարբերվում է: Մի տեսակ կա, որի հանդեպ Նրա ցանկությունն այնպիսին է, որ բնությամբ ենթակա է ձեւափոխման. այն պատրաստավաճորդն խառնվում է զգուշության հետ, դուրսով հնազանդ դառնում ամուսնությանը, ամբողջապես որոգված է անկասածանի եւ բնականության այն ոսկեղեն լույսով, որը ընկն տալիս է նրա կարողանում: Մի ուրիշ

տեսակ էլ կա, որը նա վարդապետն է ցանկանում եւ ցանկանում է վարդապետն ցանկանում է կամ տեսակ, որը լավագույնս գործածվում է նրան ամուսնությունից ընդհանրապես հեռու պահելու համար, բայց որը, անգամ ամուսնությանն դեպքում, նա հավանա է գործածելու որպես ստրուկի, կուռքի կամ էլ հանցանքի: Թեեւ առաջինի պահելու նրա սերը կարող է ներթափն այն, ինչ թշնամին «չար» է կոչում, սակայն միայն դիպվածաբար. տղամարդը կանանկ, որ իր կինը չի կրի մի ուրիշին, եւ ցավում է, որ նրան չի կարողանում հավատարմորեն սիրել: Իսկ երկրորդ տեսակի դեպքում նրա ցանկացածը հենց դա է՝ չարը զգալը. դա

հենց այն համուժություն է, որին նա ձգտում է: Կրտսեղուստ դա տեսանելի անասնախոսություն է կամ մայրություն, կամ էլ արդեհատ, եւ կամ դաժանություն, ինչն էս սիրում է, իսկ մայրությանը արդեհատ, այս բան է, այն բան է, քան ինչը նա սովորաբար անհրաժեշտ է կոչում, որ քան, որը նա նույնիսկ տեղ է համարում, երբ սթափ փնտրվում է, բայց որը, մեր արվեստի չնորհիվ, կարող է գործածվել՝ խաղալու համար նրա անհասկանալի ուղիղ լարերի հետ:

Դժոխային Վենուսը, անկասկած, գործածվում է որպես պոռնիկ կամ տիրուհի: Բայց եթե ըստ խնամարկյալ ըրիտուղյան եւ լավ եւ սերունդ անդամարդի է ամեն ինչ ներող «Սիրո» մասին

անհեթեթ դասերը, նա հաճախ կարող է մղվել այդպիսի կնոջ հետ ամուսնանալու: Եվ դա խիստ արժանի է, որ իրականություն դառնա: Դու, ճիշտ է, հաջողած չես լինի նրան պոռնկության եւ մեկուսի մոլության մեջ զգնելու, սակայն կան ուրիշ եւ ավելի անուղղակի եղանակներ՝ մարդուն կործանելու նպատակով նրա սեռական կյանքը գործածելու: Եվ, իմիջիայն, դրանք ոչ միայն արդյունավետ են, այլեւ հաճելի. դրանցից ծնված դժբախտությունը շատ երկարատև ու հզոր է:

Քո սիրտանտ քեռի՝
ԽԱՐԱԿԱԶԻ
Շարունակելի
Անգլերենից թարգմանություն՝
Ս. Ս. Ի

ԵՐԽՍՏՈՆՅԱ ԴԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լուսավորական երկաթաթաթերթ

Դիմադիր՝
Սայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Դրաստարակիչ՝
«Երիտասնակյան Չալոյան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Մատիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցե՝
Սայր Աթոռ Սր Էջմիածին

Գրանցման համար՝ 517197

Էլ. փոստ՝ gh@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
kh-tert.livejournal.com
krishayans.wordpress.com

Ստոր. տպագր. 17.10.2014 թ.

Տպագրման ծախս՝ 2100

Գինը՝ 50 դրամ